ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«05» մայիսի 2019 թվականի № 73-Ա

«ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի մարտի 18-ի թիվ 56-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ «ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի մարտի 11-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ուղղված թիվ 005/2019 գրությամբ խնդրել է հարուցել վարչական վարույթ և Ընկերության ներկայացուցչի և իրավաբանի մասնակցությամբ ուսումնասիրել Ընկերության ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը:

Ընկերության տնօրենը վիճարկել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ 01ԳԲ/29.2ԱԱ/1052-19 գրությամբ իրեն տրամադրված հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկրաձգումը մերժելու փաստը, քանի որ իր պնդմամբ ներկայացրել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով պահանջվող բոլոր փաստաթղթերը ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգում հայցելու համար:

Ընկերությունը 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 09/2017 գրությամբ դիմել է Նախարարություն՝ խնդրելով երկարաձգել ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինի (Գորովանի տեղամաս) հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը մինչև 2030 թվականը: Ի պատասխան նշված գրության՝ Նախարարությունը 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 29/29.4/2101-17 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինիս՝ ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման հայտը կքննարկվի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համապատասխան՝ Ընկերության կողմից փաստաթղթերը Նախարարություն ներկայացնելուց հետո:

Նշված գրությանն ի պատասխան Ընկերությունը 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ 17/2017 գրությամբ Նախարարություն է ներկայացրել՝

1. աշխատանքային նախագիծը,
2. թույլտվություն՝ 08.12.2012թ. թիվ ՇԱԹՎ-29/302 (նախկին 14/395),
3. լեռնահատկացման ակտ՝ 08.12.2012թ. թիվ ԼՎ-302,
4. 06.05.2017թ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանից քաղվածք,
5. կանոնադրություն,
6. պետական ռեգիստրի վկայական:

Ի պատասխան Ընկերության նշված գրության՝ Նախարարությունը 2017 թվականի օգոստոսի 25-ի թիվ 29/29.2/4860-17 գրությամբ հայտնել է Ընկերությանը, որ վերջինիս դիմումը կքննարկվի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում, այդ թվում՝ փոփոխված աշխատանքային նախագծին համապատասխան քարտեզագրական նյութերը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը և տեղեկություններ՝ հանքավայրի մնացորդային պաշարների մասին:

Ընկերությունը 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 20/2017 գրությամբ Նախարարություն է ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, որը Նախարարությունը 2017 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 07/29.2/5337-17 գրությամբ ուղարկվել է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության համար: Վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ բնապահպանության նախարարությունը 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 05/9697-17 գրությամբ ներկայացրել է Ընկերության կողմից ներկայացված արդյունահանման փոփոխված նախագծի վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված դիտողությունները, որը նույն օրը Ընդերքի գործակալության 29/29.2/5450-17 գրությամբ ներկայացվել է Ընկերությանը և տրամադրվել է 10-օրյա ժամկետ գրությամբ նշած թերությունները վերացնելու համար: Ընկերությունը նախազգուշացվել է, որ նշված թերությունները չվերացնելու դեպքում վերջինիս դիմումը կմերժվի, վերջինս տրամադրված 10-օրյա ժամկետում չի ներկայացրել ոչ մի փաստաթուղթ: Նախարարության նշված գրությանը Ընկերությունը պատասխանել է 2018 թվականի ապրիլի 4-ին՝ բաց թողնելով բոլոր ողջամիտ ժամկետները: Նշված գրությունը ևս ուղարկվել է ՀՀ բնապահպանության նախարարություն, արդեն որպես նոր ընդերքօգտագործման իրավունք հացելու դիմում, որի կողմից ստացված դիտողությունները կրկին ներկայացվել են Ընկերությանը:

2019 թվականի հունվարի 17-ի թիվ 001/2019 գրությամբ Ընկերությունը դիմել է Նախարարություն՝ ներկայացնելով Ընկերության արդյունահանման փոփոխված նախագիծը, որին ի պատասխան Նախարարությունը 2019 թվականի հունվարի 22-ի թիվ 07ԱԿ/29.2ԱԱ/303-19 գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը տրված թիվ ՇԱԹՎ-

29/302 թույլտվության գործողության ժամկետը ավարտվել է 2018 թվականի հունվարի 17-ին, իսկ դիմումին կցված փաստաթղթերը չեն բավարարում նոր օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Ընկերությունը 2019 թվականի փետրվարի 14-ին կրկին դիմել է իրեն տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը երկարաձգելու խնդրանքով, սակայն 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ 01ԳԲ/29.2ԱԱ/1052-19 գրությամբ Ընկերությանը կրկին հայտնել են, որ վերջինիս տրված թիվ ՇԱԹՎ-29/302 թույլտվության գործողության ժամկետը ավարտվել է 2018 թվականի հունվարի 17-ին, իսկ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը կարող է հանքարդյունահանման թույլտվության ժամկետը երկարաձգելու համար դիմել լիազոր մարմին ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ: Հաշվի առնելով վերոգրյալը Նախարարությունը մերժել է ՀՀ արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Գոռավան» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում հայցելու Ընկերության դիմումը:

Վարչական վարույթը իրականացնող Հանձնաժողովը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա գնահատելով գործով առկա բոլոր ապացույցները, ուսումնասիրելով գործում առկա բոլոր փաստաթղթերը, Նախարարության և Ընկերության միջև իրականացված նամակագրությունը, եկավ այն եզրահանգման, որ վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածով ամրագրված դրույթի բովանդակության, այն է՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը կարող է հանքարդյունահանման թույլտվության ժամկետը երկարաձգելու համար դիմել լիազոր մարմին ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ, մեկնաբանությունից ակնհայտ է, որ երկարաձգման դիմում ներկայացնելու համար նվազագույն ժամկետ սահմանված է թույլտվության ժամկետի ավարտին նախորդող վեցերորդ ամիսը, բայց սա ամենևին չի նշանակում, որ Ընկերությունը չէր կարող ավելի վաղ դիմել ընդերքօգտագործման իրավունքի երկարաձգման համար:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասով նշված են ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Սակայն Ընկերությունը ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման դիմում ներկայացնելիս չի ապահովել օրենսդրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ վերջինիս թերությունների շտկման ժամկետ տրամադրելուց հետո ևս այն բաց է թողել:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է

բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, 55-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերության 2019 թվականի մարտի 11-ին թիվ 005/2019 գրությամբ ներկայացված բողոքը մերժել՝ Նախարարության կողմից 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ 01ԳԲ/29.2ԱԱ/1052-19 գրությամբ արտահայտած դիրքորոշումը թողնել անփոփոխ:

2. Նախարարության իրավաբանական վարչությանը՝ եռօրյա ժամկետում ծանուցել կողմերին վարչական բողոքի մերժման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

4/5/2019

X

VERIFIED OCSP 05-Apr-19 18:26:02 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118